ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի այն ծրագրերի ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը, որոնց համար նախարարությանը վերապահված է բյուջեի գլխավոր կարգադրիչի պարտականությունները՝

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմի մասով) /01.01.01.04/,
- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմի մասով) /01.01.01.05/,
- Արխիվային ծառայություններ /08.02.04.01/,
- Վերապատրաստման ծառայություններ /09.05.02.09/,
- Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում /10.09.02.02/,
- Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին /01.08.01.03/,
- Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին /01.08.01.04/,
- Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր /04.09.01.07/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /01.01.01.08/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /01.08.01.05/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /02.05.01.02/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /04.05.01.19/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /04.05.05.02/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /06.04.01.01/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /08.02.02.04/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /08.02.04.03/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /08.02.05.08/,
- ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում /09.05.01.06/,

2016 նախատեսված ծրագրերից բացի նախարարությանը գումար է հատկացվել նաև՝

- Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ /01.01.03.03/,
- ՀՀ կառավարության պահուստային ֆոդ /11.01.01.01/ ծրագրերով:

ՀՀ նախագահի 24.02.2016թ. թիվ 196-Ա հրամանագրով և ՀՀ կառավարության 03.03.2016թ թիվ 258-Ն որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմավորվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության: Վերաբաժանման արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի բյուջեն ՀՀ կառավարության 15.04.2016թ. թիվ 375-Ն որոշմամբ առանձնացվել է: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության առաջին եռամսյակի բյուջեն և կատարված ծախսերը արտացոլված են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հաշվետվությունների մեջ՝ աճողական կարգով:

Ծրագրերի իրականացումը ըստ կատարված ծախսերի ունեն հետևյալ նկարագրությունը՝

01.01.01.04

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմի մասով) ծրագրի տարեկան նախահաշվով ֆինանսական միջոցները 01.04.2016-31.12.2016 թվականի ժամանակահատվածի համար նախատեսվել է 90219.0 հազար դրամ:

Տարվա ընթացքում ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն, 21.07.2016թ. թիվ 757-Ն և 758-Ն, որոշումներով բյուջեում տեղի են ունեցել փոփոխություններ, որի արդյունքում նախահաշվի թիվը նվազել է՝ կազմելով 86211.4 հազար դրամ: 2016 թվականի հունվարի 1-ից ներառյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության առաջին եռամսյակի բյուջեի պլանը միասին կազմել է 117246.8 հազար դրամ, իսկ ծախսերը կազմել են 114897.52 հազար դրամ, պետական բյուջե է վերադարձվել 2349.08 հազար դրամ, որը պայմանավորված է պահպանման ծախսերի տնտեսումով:

01.01.2017 թվականի դրությամբ 01.01.01.04 ծրագրով մատակարարների նկատմամբ դեբետորական պարտքեր չկան, կրեդիտորական պարտքերը կազմում են 182.52 հազար դրամ, որից 49.0 հազար դրամ էներգետիկ ծառայություններ հոդվածով, 133.52 հազար դրամ կապի ծառայություններ հոդվածով:

01.01.01.05

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմի մասով) ծրագրի տարեկան նախահաշվով ֆինանսական միջոցները 01.04.2016-31.12.2016 թվականի ժամանակահատվածի համար նախատեսվել է 231408.4 հազար դրամ:

Տարվա ընթացքում ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն, 21.07.2016թ. թիվ 757-Ն և 758-Ն, որոշումներով բյուջեում տեղի են ունեցել փոփոխություններ, որի արդյունքում նախահաշվի թիվը նվազել է՝ կազմելով 230527.8 հազար դրամ: 2016 թվականի հունվարի 1-ից ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության առաջին եռամսյակի բյուջեի պլանը ներառյալ կազմել է 589569.4 հազար դրամ, իսկ ծախսերը կազմել են 576249.88 հազար դրամ, պետական բյուջե է վերադարձվել 13319.52 հազար դրամ, որը պայմանավորված է պահպանման ծախսերի տնտեսումով:

01.01.2017 թվականի դրությամբ 01.01.01.05 ծրագրով մատակարարների նկատմամբ դեբետորական պարտքեր չկան, կրեդիտորական պարտքերը կազմում են 834.8 հազար դրամ, որից 434.25 հազար դրամ էներգետիկ ծառայություններ հոդվածով, 400.55 հազար դրամ կապի ծառայություններ հոդվածով:

08.02.04.01

Արխիվային ծառայություններ ծրագրով 2016 թվականի պետական բյուջեով ֆինանսական միջոցները նախատեսվել է 531726.9 հազար դրամ: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն որոշմամբ նվազեցվել է 1156.7 հազար դրամ էլեկտրաէներգիայի սակագնի նվազմամբ պայմանավորված: Նվազեցման արդյունքում տարեկան պլանը կազմել է 530570.2 հազար դրամ, որը ֆինանսավորվել և ծախսվել է ամբողջությամբ:

01.01.2017 թվականի դրությամբ Արխիվային ծառայություններ ծրագրով դեբետորական պարտքեր չկան, կրեդիտորական պարտքերը կազմում են 416.98 հազար դրամ:

2015 թվականին 08.02.04.01 ծրագրով դրամարկղային ծախսը կազմել էր 524294.1 հազար դրամ:

2016 թվականի դրամարկղային ծախսի աճը պայմանավորված է հոսանքի և գազի սակագների վերահաշվարկով:

09.05.02.09

Վերապատրաստման ծառայություններ ծրագրով 2016 թվականի համար նախատեսվել է 63886.5 հաար դրամ գումար, որից ներքին գործուղումներ հոդվածով 17775 հազար դրամ և 46111.5 հազար դրամ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով:

Նախահաշվով նախատեսված գումարներից ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն, 18.11.2016թ. թիվ 1182-Նև այլ որոշումներով նվազեցումներից հետո նախահաշվի գումարը կազմել ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով է 37749.9 հազար դրամ: Նախատեսված ֆինանսական միջոցներից վերապատրաստման ծառայությունների նպատակով ծախսվել է 9702.0 հազար դրամ, իսկ մնացած գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Նախահաշվային և ծախսված գումարների տարբերությունը պայմանավորված է 2016 թվականին վերապատրաման գործընթացը ոչ նպատակահարմար համարելու պատճառով՝ կապված 2016 թվականի ՏԻՄ ընտրությունների հետ, անարդյունավետ ծախսերից խուսափելու համար: Վերապատրաստման գործընթացը կիրականացվի համայնքների խոշորացման գործընթացների ավարտին զուգահեռ, որի արդյունքում չեն վերապատրաստվի այն աշխատակիցները որոնք կհայտնվեն օպտիմալացման շրջանակում:

01.01.2017 թվականի դրությամբ 09.05.02.09 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

10.09.02.02

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում ծրագրով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համար 15.04.2016թ թիվ 375-Ն որոշմամբ նախատեսվել է 4410.0 հազար դրամ: 2016 թվականի տարեկան բյուջեում արտացոլված է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016թ առաջին եռամսյակի ցուցանիշները՝ ընդամենը 76508.0 հազար դրամ:

2016 թվականին 10.09.02.02 ծրագրում տեղի է ունեցել փոփոխություն ՀՀ կառավարության 23.06.2016թ թիվ 639-Ն որոշմամբ և ծրագրի նախահաշվային արժեքը 2016 թվականի առաջին եռամսյակը ներառյալ կազմել է 76148.0 հազար դրամ, իսկ ծախսը՝ 73850.0 հազար դրամ:

Նախատեսված և ծախսված գումարների տարբերությունը պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում նոր աշխատակիցների առկայությամբ, որոնց համար օրենքով սահմանված կարգով սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքը կառաջանար աշխատանքային հարաբերությունների վեց ամիսը լրանալուց հետո:

01.01.2017 թվականի դրությամբ 10.09.02.02 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

01.08.01.03

Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին ծրագրով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 1537831.0 հազար դրամ, որը ՀՀ կառավարության 31.03.2016թ. թիվ 344-Ն որոշմամբ բաշխվել է մարզպետարաններին:

01.08.01.04

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին ծրագրով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 928871.2 հազար դրամ, որը ՀՀ կառավարության 18.02.2016թ. թիվ 144-Ն որոշմամբ բաշխվել է մարզպետարաններին:

04.09.01.07

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր 2016 թվականին նախատեսվել է 2553440.6 հազար դրամ, որից դրամաշնորհային միջոցները կազմում են 2034483.9 հազար դրամ, իսկ 518956.7 հազար դրամ: ՀՀ կառավարության 01.12.2016թ. թիվ 1243-ն որոշմամբ համաֆինանսավորման գումարից նվազեցվել է 30,000 հազար դրամ: ՀՀ կառավարության 11 դեկտեմբեր 2014թվականի թրվ 52-34 արձանագրային որոշմամբ, ծրագիրը միտված է Հայաստանի տարածքային համաչափ զարգացմանը ինֆրակառուցվածքների բարելավմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11.750.000 եվրո, որից ԵՄ-ն ստանձնում է առավելագույնը 10.000.000 եվրո գումար ֆինանսավորելու պարտավորություն: Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել և աշխատանքներն իրականացնող կազմակերպություններն չեն ընտրվել: Ծրագրի մեկնարկը կտրվի 2017 թվականի հունվարից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երևանի քաղաքապետարանը համայնքային կառավարչական հիմնարկ է, որն իրականացնում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը ֆինանսական, քաղաքաշինության, կրթության, մշակութային, առողջապահության, տրանսպորտային, բնակարանային, սանիտարական և այլ բնագավառներում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում:

Երևանի քաղաքապետարանը ֆինանսների բնագավառում տնօրինում է ՀՀ պետական բյուջեով Երևան քաղաքին հատկացված Երևան համայնքի բյուջեի միջոցները և վերահսկում այդ միջոցների նպատակային օգտագործումը:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ-տնտեսության բնագավառներում իրականացնում է բնակարանային և կապիտալ շինարարություն, կազմակերպում է Երևան քաղաքի ջրմուղ-կոյուղու, ոռոգման սպասարկումը և վերանորոգումը, կազմակերպում է Երևան քաղաքի կառուցապատումը, ապահում է սանիտարական մաքրումը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներում կազմակերպում է հասարակական տրանսպորտի աշխատանքը, քաղաքային նշանակության ճանապարհների, կամուրջների և այլ կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը:

Հողօգտագործման բնագավառում օրենսդրությամբ սահմանված կարգով տիրապետում և օգտագործում է պետական սեփականության հողերը, պայմանագրեր է կնքում հողի և գույքի սեփականատերերի հետ:

Կրթության բնագավառում կազմակերպում է քաղաքային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը և վերահսկողությունը, ապահովում պետական կրթական ծրագրերի իրագործումը:

Առողջապահության բնագավառում իրականացնում է քաղաքային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքը և իրականացնում է հակահամաճարակային միջոցառումներ:

Մշակույթի և սպորտի բնագավառներում կազմակերպում է քաղաքային ենթակայության մշակութային և սպորտի, ինչպես նաև պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Երևան քաղաքում տարածքային կառավարումն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով: Այս գործառույթի իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները փոխանցվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով:

Մասնավորապես ՀՀ համայնքային բյուջեներին տրամադրվող սուբվենցիայի մասով:

<u>01.01.01.08</u>

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1092877.1 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն որոշմամբ 573.1 հազար դրամ նվազեցվել է կապված էլէկտրաէներգիայի և գազի սակագների փոփոխման հետ:

2016 թվականի նախահաշվի գումարը կազմել է 1092304.0 դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:

2015 թվականին 01.01.01.08 ծրագրով ծախսը կազմել է 1066600.6 հազար դրամ, տարբերությունը պայմանավորված է էլ. էներգիայի սակագներով:

01.01.2017 թվականի դրությամբ 01.01.01.08 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

<u>01.08.01.05</u>

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 72450.0 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: Նախատեսված ֆինանսական միջոցները ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել են:

2015թվականին 01.08.01.05 ծրագրով գումար նախատեսված չի եղել: 2016 թվականի համար գումարը տրամադրվել է Էլեկտրաէներգիայիսակագնի բարձրացմամբ պայմանավորված Երևան համայնքի որպես սուբսիդիա:

01.01.2017 թվականի դրությամբ 01.08.01.05 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

<u>02.05.01.02</u>

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 17640.0 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 15.09.2016թ. թիվ 948-Ն որոշմամբ 965.96 հազար դրամ ավելացվել է կապված այլընտրանքային աշխատանք կատարող անձանց

աշխատատեղերի աճով: 2016 թվականի նախահաշվի գումարը 02.05.01.02 ծրագրով կազմել է 18605.96 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 02.05.01.02 ծրագրով կազմել է 12990.0 հազար դրամ, որը պայմանավորված է պահանջվող աշխատանքների ծավալով:
01.01.2017 թվականի դրությամբ 02.05.01.02 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

04.05.01.19

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 3284000.0 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 25.08.2016թ. թիվ 873-Ն որոշմամբ 1623000.0 հազար դրամ նվազեցվել է Երևան քաղաքի սպասարկման այլ ոլորտներին ուղղելու նպատակով:
Նվազեցումից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 1661000.0 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 04.05.01.19 ծրագրով կազմել է 3284000.0 հազար դրամ, 2016 թվականի տարեսկզբի պլանի նկատմամբ տարբերություն չկա:
01.01.2017 թվականի դրությամբ 04.05.01.19 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

04.05.05.02

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 629611.8 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն և 25.08.2016թ. թիվ 873-Ն որոշումներով նվազեցվել են 6240,9 հազար դրամ և 199000.0 հազար դրամ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում և Երևան քաղաքի սպասարկման այլ ոլորտներին ուղղելու նպատակով: Նվազեցումներից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 424370.9 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 04.05.05.02 ծրագրով կազմել է 590774.9 հազար դրամ: Տարբերությունը պայմանավորված է էլ. էներգիայի սակագներով:
01.01.2017 թվականի դրությամբ 04.05.05.02 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

06.04.01.01

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 2361043.8 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն և 25.08.2016թ. թիվ 873-Ն որոշումներով նվազեցվել են 37085.3 հազար դրամ և 690661.4 հազար դրամ՝ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում և Երևան քաղաքի սպասարկման այլ ոլորտներին ուղղելու նպատակով: Նվազեցումներից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 1633297.1 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 06.04.01.01 ծրագրով կազմել է 2233057.5 հազար դրամ: Տարբերությունը պայմանավորված է էլ. էներգիայի սակագներով:

01.01.2017 թվականի դրությամբ 04.05.05.02 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

08.02.02.04

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 243996.7 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն որոշմամբ 281.0 հազար դրամ նվազեցվել է էլէկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում: Նվազեցումից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 243715.7 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 08.02.02.04 ծրագրով կազմել է 246448.9 հազար դրամ: Տարբերությունը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի սակագներով:
01.01.2017 թվականի դրությամբ 08.02.02.04 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

08.02.04.03

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 253464.9 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն որոշմամբ 464.5 հազար դրամ նվազեցվել է էլէկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում: Նվազեցումից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 253000.4 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 08.02.04.03 ծրագրով կազմել է 252746.9 հազար դրամ: Տարբերությունը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի սակագներով:
01.01.2017 թվականի դրությամբ 08.02.04.03 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

08.02.05.08

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 362835.6 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> հոդվածով: ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 724-Ն և 25.08.2016թ. թիվ 873-Ն որոշումներով նվազեցվել են 259.7 հազար դրամ և 147252.6 հազար դրամ էլէկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում և Երևան քաղաքի սպասարկման այլ ոլորտներին ուղղելու նպատակով: Նվազեցումներից հետո ծրագրի նախահաշվային գինը կազմել է 215323.3 հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:
2015 թվականի ծախսը 08.02.05.08 ծրագրով կազմել է 359864.5 հազար դրամ: Տարբերությունը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի սակագներով:
01.01.2017 թվականի դրությամբ 08.02.05.08 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

09.05.01.06

ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 219397.1 հազար դրամ <<Ընթացիկ սուբվենցիաներ

համայնքներին>> հոդվածով: Նախահաշվով նախատեսված միջոցներն ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել են:
2015 թվականի ծախսը 09.05.01.06 ծրագրով կազմել է 219250.6 հազար դրամ: Ծախսերի միջև տարբերություն չկա:
01.01.2017 թվականի դրությամբ 09.05.01.06 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան:

01.01.03.04

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ ծրագրով 2016 թվականի պետական բյուջեով հատկացվել է 4064.12 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է:

11.01.01.01

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ ծրագրով ՀՀ 2016 թվականին պետական բյուջեով հատկացվել է՝

հհ	ՀՀ կառավարության որոշման համարը ամսաթիվը	Գումարը հազար դրամ
1	15.09.2016թ. N 948-Ն	4996.9
2	22.09.2016թ. N 1017-Ն	59617.0
3	18.11.2016թ. N 1182-Ն	3000.0
	Ընդամենը	67613.9

ՀՀ կառավարության 15.09.2016թ. N 948-Ն որոշմամբ 4996.9 հազար դրամ գումարը հատկացվել է այլընտանքային ծառայությունների բավարարմանը՝ 2016 թվականի ամառային զորակոչի շրջանակներում այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված 20 այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական հատուցմանը, որից ֆինանսավորվել և ծախսվել է 4649.09 հազար դրամ:
ՀՀ կառավարության 22.09.2016թ. N 1017-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման նպատակով «Երևան» հիմնադրամին տրամադրված գումար: Նախատեսված գումարները ֆինանսավորվել և վճարվել են ամբողջությամբ:
ՀՀ կառավարության 18.11.2016թ. N 1182-Ն որոշմամբ Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյակին նվիրված միջոցառման անցկացման նպատակով «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը տրամադրված գումար: Նախատեսված գումարները ֆինանսավորվել և վճարվել են ամբողջությամբ:
Նախատեսված գումարներից 2016 թվականին ֆինանսավորվել և ամբողջությամբ ծախսվել է 67266.09 դրամ.իսկ շեղումը պայմանավորված է այլընտանքային ծառայությունների անհրաժեշտ աշխատանքի և պահանջի քանակով:
01.01.2017 թվականի դրությամբ 11.01.01.01 ծրագրով դեբետորական և կրեդիտորական պարտքեր չկան: